Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2021 թ. որոշմամբ
««Ա.Ի.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«Ա.Ի.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱԶԱՓՆՅԱԿ ԱԶԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ ԱԼԻԽԱՆՅԱՆ ԵՂԲԱՅՐ. 2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01345
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2011-12-06
1.5 ՀՎՀՀ-ն		01202364
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10342474
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.yerphi.am
1.8 Էլեկտրոնային փոստը		lusine.boyajyan@yandex.ru .ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Անի Ապրահամյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	353	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար դրամաշնորհ	625916500
	Ֆիզիկայի բնագավառում արդիական ներուժի ապահովում ծրագրի իրականացման համար դրամաշնորհ	84918800

	Գիտական աստիճան ունեցող աշխատակիցներին վճարվող հավելավճարների պայմանագիր	39675000
	ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ, ՀայԻտալական միջազգային պայմանագիր	3612800
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացում	130936000
	Բժշկական սարքավ. մանրէազերծում	3000000
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների հավելավճար	35815200
	Գիտական կադրերի պատրաստում և ասպիրանտական կրթաթոշակ	4263800
	Գիտական և գիտատեխնիկական սարքավորումների ձեռք բերում	20000000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Միջազգային համագործակցություններից ֆինանսավորում	76044385
	Ձեռնարկատիրական եկամուտ	135542487
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	538000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Ապրանքանյութական արժեքներ՝ գիտական	132022
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար դրամաշնորհ	625916500	
Ֆիզիկայի բնագավառում արդիական ներուժի ապահովում ծրագրի իրականացման համար դրամաշնորհ	84918800	
Գիտական աստիճան ունեցող աշխատակիցներին վճարվող հավելավճարների պայմանագիր	39675000	
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ, ՀայԻտալական միջազգային պայմանագիր	3009000	

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացում	83552000
Բժշկական սարքավ. մանրէազերծում	3000000
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների հավելավճար	35815200
Գիտական կադրերի պատրաստում և ասպիրանտական կրթաթոշակ	4263800
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1192950144
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	880150300

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 33 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

AMH AUDIT
HLB WE ARE AN INDEPENDENT MEMBER OF THE GLOBAL ADVISORY AND ACCOUNTING NETWORK

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0023,
Արշակունյաց պող. 2,
գրասենյակ 315

Հեռախոս՝ +(374 60) 62 32 51
Կայքեր՝ www.amhaudit.am
www.hlb.global

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք իրականացրել ենք «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմքեր»* բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Վերապահումով կարծիքի հիմքեր

1. Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 8-ում, հաշվետու ամսաթվի դրությամբ 633,689 հազար դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներ հաշվառվում են զրո՝ հաշվեկշռային արժեքով (2019թ.՝ 601,179 հազար դրամ): Միաժամանակ, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնից ստացված հիմնական միջոցների գծով կուտակված արժեզրկումը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է 360,707 հազար դրամ (2019թ.՝ 360,707 հազար դրամ):

Հիմնադրամին, իր վերակազմավորման ընթացքում, հանձնվել են հիմնական միջոցներ, որոնք Հիմնադրամի հաշվապահական հաշվեկշռում հաշվառվում են պայմանական սկզբնական արժեքներով, որոնք կարող են էականորեն տարբերվել այդ հիմնական միջոցների իրական արժեքներից:

Հիմնադրամը վերակազմավորումից հետո մինչ հաշվետու ժամանակաշրջանի ավարտը չի իրականացրել հիմնական միջոցների առանձին դասերի վերագնահատում, բացառությամբ շենք, շինություններ դասի, որը վերջին անգամ վերագնահատվել է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չի իրականացրել հիմնական միջոցների ամբողջական գույքագրում: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի իրականացրել է հիմնական միջոցների ամբողջական գույքագրում, սակայն գույքագրման արդյունքների ամփոփման գործընթացը կից հաշվետությունների ամսաթվի դրությամբ դեռևս գտնվում էր ընթացքի մեջ, և, հետևաբար, գույքագրման արդյունքները հնարավոր չի եղել համադրել հաշվապահական հաշվառման տվյալների հետ: Ի լրումն, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 19(բ)-ում գույքագրման արդյունքում չհայտնաբերված հիմնական միջոցների վերաբերյալ նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին :

Ելնելով Հիմնադրամի հիմնական միջոցների բնույթից և քանակից, ինչպես նաև հաշվի առնելով վերոնշյալ հարցերի հնարավոր ազդեցությունը՝ մենք չկարողացանք որոշել, թե արդյոք առկա է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի ճշգրտման անհրաժեշտություն:

2. Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամն իրականացրել է պաշարների ամբողջական գույքագրում, սակայն գույքագրման արդյունքների հնարավոր չի եղել համադրել հաշվապահական հաշվառման տվյալների

հետ: Հաշվետու ամսաթվի դրությամբ չի իրականացվել նաև պաշարների հետագա չափումը՝ իրացման զուտ արժեքից և ինքնարժեքից նվազագույնով:

Ելնելով Հիմնադրամի պաշարների բնույթից և քանակից, ինչպես նաև հաշվի առնելով վերոնշյալ հարցերի հնարավոր ազդեցությունը՝ մենք չկարողացանք որոշել թե արդյոք առկա է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների հաշվեկշռային արժեքի ճշգրտման անհրաժեշտություն: Ի լրումն, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 19(բ)-ում գույքագրման արդյունքում չհայտնաբերված պաշարների վերաբերյալ նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին :

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՎՄՍԽ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծին վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀՎՄՍԽ Վարքագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2019 թվականի դեկտեմբերի 31-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2020 թվականի նոյեմբերի 26-ին արտահայտել է վերապահումով կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են վերահսկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում՝ ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվեվտությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած էական հարցերի, այդ թվում աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու գործընկերն է՝

Արամ Հովհաննիսյան
Գլխավոր տնօրեն

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ
15 հուլիսի 2021թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	2,511,127	2,608,948
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		1,146	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,512,273**	**2,608,948**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	141,495	143,966
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	10	70,459	35,951
Կանխավճարներ շահութահարկի գծով		1,828	1,155
Ժամկետային ավանդներ	11	55,278	12,722
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	176,375	218,471
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**445,435**	**412,265**
Ընդամենը ակտիվներ		**2,957,708**	**3,021,213**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	802,673	924,218
Հետաձգված հարկային պարտավորություններ	7	236,025	243,958
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,038,698**	**1,168,176**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	193,134	135,261
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	82,168	93,696
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**275,302**	**228,957**
Զուտ ակտիվներ			
Վերագնահատման պահուստ	16	1,013,948	1,084,259
Կուտակված արդյունք		629,760	539,821
Ընդամենը զուտ ակտիվներ		**1,643,708**	**1,624,080**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**2,957,708**	**3,021,213**

հազ. դրամ	**Ծնթզ.**	**2020թ.**	**2019թ.**
Նվիրատվություններից եկամուտ	5	978,851	1,035,498
Այլ եկամուտ	6	206,015	158,308
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին		(801,162)	(755,995)
Մաշվածություն	8	(152,046)	(164,946)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(152,483)	(125,819)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(32,615)	(44,084)
Նյութական ծախսեր		(17,063)	(86,196)
Գործուղում և ուսուցում		(11,504)	(29,953)
Այլ ծախսեր		(13,447)	(53,439)
Գործառնական շահույթ/(վնաս)		**4,546**	**(66,626)**
Ֆինանսական եկամուտ		8,792	5,367
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից		1,090	516
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		**14,428**	**(60,743)**
Շահութահարկի գծով փոխհատուցում	7	5,200	38,144
Տարվա շահույթ/(վնաս)		**19,628**	**(22,599)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021 թվականի հուլիսի 15-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Անի Ապրահամյան
Գործադիր տնօրեն

Լուսինե Բոյաջյան
Ֆինանսական տնօրեն

հազ. դրամ	Վերագնահատման պահուստ	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	1,154,570	492,109	1,646,679
Վնաս տարվա համար	-	(22,599)	(22,599)
Վերագնահատման պահուստի իրացում	(70,311)	70,311	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**1,084,259**	**539,821**	**1,624,080**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**1,084,259**	**539,821**	**1,624,080**
Շահույթ տարվա համար	-	19,628	19,628
Վերագնահատման պահուստի իրացում	(70,311)	70,311	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,013,948**	**629,760**	**1,643,708**

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	19,628	(22,599)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	152,046	164,946
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	1,567
Շահութահարկի գծով փոխհատուցում	(5,200)	(38,144)
Ֆինանսական եկամուտ	(1,090)	(5,367)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(8,792)	(516)
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**156,592**	**99,887**
Պաշարների փոփոխություն	2,471	(102,049)
Դեբիտորական պարտքերի և կանխավճարների փոփոխություն	(32,304)	6,207
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(11,415)	56,916
Փոփոխություններ շնորհներում	(63,672)	29,827
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	**51,672**	**90,788**
Վճարված շահութահարկ	(3,407)	(9,809)
Ստացված տոկոսներ	1,606	11,857
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**49,871**	**92,836**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(54,225)	(58,509)
Ժամկետային ավանդներ	(43,072)	113,072
Ներդրումային (գործունեության համար օգտագործված)/ գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(97,297)**	**54,563**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(47,426)**	**147,399**
Փոխարժեքի տատանման ազդեցությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքների վրա	5,330	55
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	218,471	71,017
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (Ծանոթագրություն 12)	**176,375**	**147,399**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 33-րդ էջերում

1 Նախապատմություն

(ա) Հիմնադրամը և հիմնական գործունեությունը

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է 1943 թ.-ին՝ եղբայրներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանների կողմից, որպես Երևանի պետական համալսարանի մասնաճյուղ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. սեպտեմբերի 1-ի թիվ 1301-Ն որոշման համաձայն «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել է որպես «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ:

2011թ. դեկտեմբերի 6-ին կազմված փոխանցման ակտով Հիմնադրամին որպես իրավահաջորդի, փոխանցվել են ՊՈԱԿ-ի 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ունեցած ակտիվներն ու պարտավորությունները:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ֆինանսավորում է ստացել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեից, ինչպես նաև ֆիզիկայի բնագավառում մասնագիտացած արտասահմանյան մի շարք կազմակերպություններից:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող. 2:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2020թ. կազմել է 353 մարդ (2019թ.՝ 368 մարդ):

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինն է Հոգաբարձուների խորհուրդը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է յոթ անդամներից՝

- Ա. Հայոցյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ (հոգաբարձուների խորհրդի նախագահ)
- Ս. Կարաբեկյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական
- Ռ. Ստրաուխ - ԱՄՆ-ի «Ռոդա Գրուպ» վենչուրային կապիտալի խմբի նախագահ
- Ա. Պապոյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն
- Խ. Ներկարարյան - ԵՊՀ ԳԲՀ-ի ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի պրոֆեսոր
- Ռ. Մկրտչյան - «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի առաջատար գիտաշխատող
- Հ. Մարուքյան - «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի առաջատար գիտաշխատող

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, նրա գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են բարեփոխվել և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2020թ. ընթացքում Հայաստանի տնտեսության և Հիմնադրամի գործունեության վրա բացասաբար ազդեցին Covid-19 և Լեռնային Ղարաբաղում վերսկսված պատերազմը: 2021թ. համար կանխատեսվում են ավելի բարենպաստ պայմաններ, թեև անորոշությունը մեծ է:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շենքերի, որոնք չափվում են իրական արժեքով՝ հանած վերագնահատման ամսաթվից հետո կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Հողը ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է իրական և կադաստրային արժեքների տարբերությամբ:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշվում է այլ տեղեկատվություն:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ

կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 5 - Նվիրատվություններից եկամտի ճանաչում
- Ծանոթագրություն 6 - Այլ եկամտի ճանաչում
- Ծանոթագրություն 8 - Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ
- Ծանոթագրություն 10 - Դեբիտորական պարտքերի հավաքագրելիություն

Իրական արժեքի որոշում

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Հիմնադրամը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:
Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև՝

1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված),

2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք էական են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն Հիմնադրամը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Որոշ համեմատական գումարներ վերադասակարգվել են ընթացիկ տարվա ներկայացումներին համապատասխանելու նպատակով:

(ա) Հասույթ և եկամուտ

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ստացված շնորհներից, Հիմնադրամի կողմից ծառայությունների մատուցումից և այլ աղբյուրներից:

- ***Շնորհներ և եկամուտ նվիրատվություններից***

Եկամուտներին և ակտիվներին վերաբերող շնորհների սկզբնական ճանաչումն իրականացվում է իրական արժեքով, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ շնորհը կստացվի և Հիմնադրամը բավարարելու է շնորհի հետ կապված պայմանները: Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով ակտիվի օգտակար

Հիմնադրամի կրած ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես շնորհներից և նվիրատվություններից ստացվող եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջաններում, երբ ծախսերը ճանաչվում են: Այս եկամուտը ներառվում է «Նվիրատվություններից եկամուտ» հոդվածում:

- ***Ծառայությունների մատուցումից***

Ծառայությունների մատուցումից եկամուտը ճանաչվում է, երբ ծառայությունները մատուցված են, ինչը հիմնավորվում է ստացող գործընկերոջ կողմից ստորագրված փաստաթղթերով: Այս եկամուտը ներառվում է «Այլ եկամուտ» հոդվածում:

- ***Ապրանքների վաճառքից***

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է այն դեպքում, երբ բավարարվել են հետևյալ բոլոր պայմանները.

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,

բ) վաճառված ապրանքի նկատմամբ Հիմնադրամը չի պահպանում ո՛չ կառավարչական շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ ըստ էության հսկողություն,

գ) հնարավոր է հասույթի գումարը արժանահավատորեն չափել,

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները հոսեն Հիմնադրամ, և

ե) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

Սովորաբար, սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը համընկնում է օրենքով նախատեսված ձևով իրավունքի փոխանցման կամ գնորդի տիրապետմանը հանձնելու հետ:

Ապրանքների վաճառքի ժամանակ դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակահատվածում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

- ***Վարձակալությունից***

Հիմնադրամի գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Այս եկամուտը ներառվում է «Այլ եկամուտ» հոդվածում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հիմնադրամի ֆինանսական եկամուտը և ծախսերը ներառում են.

- ներդրումների գծով տոկոսային եկամուտը,
- փոխարժեքային տարբերություններից ստացված օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս:

(գ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Աշխատակիցների հատուցումներ

Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները չափում է չզեղչված հիմունքով և ծախսագրում է, երբ համապատասխան ծառայությունը ստացվում է:

Պարտավորություն է ճանաչվում աշխատակիցներին վճարման ենթակա այն գումարների մասով, որոնց համար աշխատակցի կողմից մատուցված ծառայության դիմաց Հիմնադրամն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել:

(ե) Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք Հիմնադրամն ակնկալում է, ունենալ երբ հաշվետու ժամանակաշրջանի վերջում իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կվերականգնի կամ կհաշվանցվի:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Հիմնադրամն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Հիմնադրամը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(զ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնադրամի շենքերը և շինությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ անկախ գնահատողների կողմից այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքին և արտացոլվում է զուտ ակտիվներում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Կուտակված արդյունքին փոխանցված վերագնահատման պահուստի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա գումարն ուղղակիորեն վերագրվում Է կուտակված արդյունքին:

Հիմնական միջոցների այլ դասերը չափվում են սկզբնական՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

<< հողային օրենսգրքի փոփոխության արդյունքում Հիմնադրամին փոխանցված հողը (տես ծանոթագրություն 8) ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված է իրական արժեքի և կադաստրային արժեքի տարբերությամբ:

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iv) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց օգտագործման համար մատչելի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար:

Շենքեր և շինություններ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	5տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

Հողի հաշվեկշռային արժեքի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

(է) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է առաջին մուտքը առաջին ելք (ՖԻՖՈ) սկզբունքով և ներառում է ձեքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Հիմնադրամին հետ վերադարձման, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման հետ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է առկա պաշարների իրացման զուտ արժեքը: Հիմնադրամի ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ դրանց իրացման զուտ արժեքը որոշելու հարցում՝ ելնելով այդ պաշարների բնույթից: Եթե գնահատման արդյունքում պարզվում է, որ պաշարների իրացման զուտ արժեքն ավելի փոքր է, քան դրանց սկզբնական արժեքը, ապա գրանցված տարբերությունը ծախսագումում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

(ը) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրային դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց,

սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղկացուցիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Վարկեր և դեբիտորական պարտքերը ներառում է ֆինանսական ակտիվների հետևյալ դասերը. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բանկային ավանդներ, դեբիտորական պարտքեր և ծախսերի հատուցման գծով դեբիտորական պարտքեր:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկը և ընթացիկ բանկային հաշիվները:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային ներդրում, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային ներդրում կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հիմնադրամը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ - Բիզնես մոդելի գնահատում

Հիմնադրամը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է

գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ֆինանսական ակտիվների նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար և Հիմնադրամը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվներ - Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Հիմնադրամը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Հիմնադրամի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ֆինանսական ակտիվից):

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

Ֆինանսական ակտիվներ - Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ - Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխությունե), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Հիմնադրամը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն:

Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշը չի բավարարվում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Հիմնադրամը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա

ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Հիմնադրամը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Հիմնադրամը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) Ապահանաչում

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Հիմնադրամը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Հիմնադրամը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս

պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(թ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ և պայմանագրային ակտիվներ

Հիմնադրամը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:
Հիմնադրամն առևտրային դեբիտորական պարտքերի վնասի գծով պահուստը չափում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Հիմնադրամը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Հիմնադրամի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը: Հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը չի ներառվում ֆինանսական ակտիվների կարճաժամկետ բնույթի պատճառով:

Հիմնադրամը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Հիմնադրամը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- հավանական չէ, որ պարտապանը ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Հիմնադրամի նկատմամբ, կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Հիմնադրամը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Առևտրային դեբիտորական պարտքերի կարճ ժամկետի պատճառով ապասվող պարտքային վնասը չի զեղչվում:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Հիմնադրամը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Իր հաճախորդների համար Հիմնադրամը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան երեք տարի ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով որ դա ողջամիտ ժամանակահատված է: Դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Հիմնադրամի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ժ) Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Պետական շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

(ի) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(լ) Վարձակալություն

(i) Կարճաժամկետ և ցածրարժեք վարձակալություններ

Հիմնադրամը կիրառում է ՖՀՄՍ 16 սանդարտով նախատեսված կարճաժամկետ վարձակալության ճանաչման ազատումը մեքենաների և սարքավորումների և գրասենյակային գույքի կարճաժամկետ վարձակալության դեպքում: Սրանք այն վարձակալություններն են, որոնց ժամկետը մինչև 12 ամիս է և չեն պարունակում գնման տարբերակ:

Կարճաժամկետ վարձակալության վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

4 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2020թ. հունվարի 1-ից և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, թեև դրանց վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Հիմնադրամը ժամանակից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ-ի ստանդարտների հայեցակարգային հիմունքների հղումների փոփոխություններ:
- Բիզնեսի սահմանումը (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ):
- Էականության սահմանում (ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ):
- ՖՀՄՍ 16 Covid-19 հետ կապված վարձակալության արտոնություններ:

5 Նվիրատվություններից եկամուտ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներից	831,923	876,472
Ակտիվներին վերաբերող շնորհներից	146,928	159,026
	978,851	**1,035,498**

6 Այլ եկամուտ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ապրանքների վաճառքից հասույթ	93,374	30,904
Գիտական տնտեսական պայմանագրերից եկամուտ	75,026	37,391
Վարձակալությունից եկամուտ	16,520	19,718
Պաշարների հակադարձումից եկամուտ	-	60,516
Այլ եկամուտ	21,095	9,779
	206,015	**158,308**

Գիտական տնտեսական պայմանագրերից եկամուտը ներկայացնում է ICTP միջազգային գիտական պայմանագրի շրջանակներում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի տիեզերական հետազոտությունների ինստիտուտի հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների գծով ճանաչված եկամուտները:

7 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հիմնադրամը շահութահարկը վճարում է 18% դրույքով (2019թ.՝ 20%):

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ տարի	(2,733)	(6,540)
Հետաձգված հարկ	7,933	44,684
	5,200	**38,144**

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2020թ.		2019թ.	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	14,428	100	(60,743)	100
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	2,597	18	(12,149)	20
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	(7,797)	-54	1,111	-1.8
Հարկային դրույքաչափի փոփոխության ազդեցություն	-	-	(27,106)	18
	(5,200)	**-36**	**(38,144)**	**36.2**

(գ) Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.
Հիմնական միջոցներ	(243,958)	7,742	(236,216)
Դեբիտորական պարտքեր	-	191	191
	(243,958)	**7,933**	**(236,025)**

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.
Հիմնական միջոցներ	(288,642)	44,684	(243,958)
	(288,642)	**44,684**	**(243,958)**

8 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հող, շենքեր և շինություններ	Ամրակցված գույք	Կառուցվածքներ, տրանսպորտային միջոցներ և արտադրատնտեսական գույք	Համակարգչային տեխնիկա, մեքենա-սարքավորումներ, այլ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք					
Առ 1 հունվարի 2019թ.	2,940,246	290,145	80,935	1,025,916	4,337,242
Ավելացում	2,435	28,742	1,586	25,746	58,509
Օտարում	-	-	-	(2,494)	(2,494)
Ներքին շարժ	-	-	1,420	(1,420)	-
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**2,942,681**	**318,887**	**83,941**	**1,047,748**	**4,393,257**
Ձեռքբերումներ	8,705	1,431	157	43,933	54,225
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**2,951,386**	**320,318**	**84,098**	**1,091,681**	**4,447,482**
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ					
Առ 1 հունվարի 2019թ.	549,975	84,996	59,876	925,443	1,620,290
Տարվա մաշվածություն	97,954	14,705	7,092	45,195	164,946
Դուրս գրումներ	-	-	-	(927)	(927)
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**647,929**	**99,701**	**66,968**	**969,711**	**1,784,309**
Տարվա մաշվածություն	97,940	15,906	6,472	31,728	152,046
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**745,869**	**115,607**	**73,440**	**1,001,439**	**1,936,355**
Հաշվեկշռային արժեք					
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**2,294,752**	**219,186**	**16,973**	**78,037**	**2,608,948**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**2,205,517**	**204,711**	**10,658**	**90,242**	**2,511,127**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Հիմնադրամի շենքերը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատվել են անկախ գնահատողների կողմից: Վերագնահատումից աճը վերագրվել է վերագնահատման պահուստին:

Եթե շենքերը ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները կկազմեին 33,724 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 26,563 հազար դրամ):

Հիմնադրամի հիմնական միջոցների «Հող, շենքեր և շինություններ» դասում ներառվել է Հողային օրենսգրքի փոփոխության արդյունքում Հիմնադրամին սեփականության իրավունքով փոխանցված հողամասը՝ 927,881 հազար դրամ արժեքով:

Հիմնական միջոցների «Հող, շենքեր և շինություններ» դասում հաշվառվում են անհատույց ստացված շենքեր և շինություններ 117,321 հազար դրամ (2019թ.-ին՝ 117,321 հազար դրամ). Այս շենքերն ու շինությունները Հիմնադրամին են հանձնվել ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 1-ի թիվ 1301-Ն որոշման համաձայն, որով «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել է որպես «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ:

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 633,689 հազար դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներ (2019թ.-ին՝ 601,179 հազար դրամ) հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով:

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կուտակված արժեզրկումը կազմում է 360,707 հազար դրամ (2019թ.-ին՝ 360,707 հազար դրամ):

Հիմնադրամի «Հող, շենքեր և շինություններ» դասում հաշվառվող հիմնական միջոցների մի մասը տրված է գործառնական վարձակալության: Վարձակալական եկամուտը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կազմել է 16,520 հազար դրամ (2019թ. 19,718 հազար դրամ), որը ներառված է այլ եկամտում վարձակալությունից եկամուտ հոդվածում (տե՛ս ծանոթագրություն 6):

Վերակազմավորման արդյունքում այն շենքերը և շինությունները, որոնց նկատմամբ Հիմնադրամը սեփականության իրավունք չունի, չեն ներառվել Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Այդ շինությունների հաշվեկշռային արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8,135 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,135 հազար դրամ):

9 Պաշարներ

հազ. դրամ	**2020թ.**	**2019թ.**
Նյութեր	129,810	136,184
Թանկարժեք մետաղներ և քարեր	5,990	6,002
Այլ պաշարներ	5,695	1,780
	141,495	**143,966**

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 17,067 հազար դրամ (2019թ.՝ 101,588 հազար դրամ): Հաշվետու տարում տեղի չի ունեցել պաշարների արժեզրկման հակադարձում՝ կապված նախկինում արժեզրկված պաշարների հաշվետու տարվա ընթացքում ծախսագրման հետ (2019թ.՝ 60,516 հազար դրամ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի պաշարները գրավադրված չեն:

10 Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	48,916	11,526
Սպասվող պարտքային վնասի պահուստ	(1,063)	-
Զուտ դեբիտորական պարտքեր	**47,853**	**11,526**
Ծառայությունների դիմաց տրված կանխավճարներ	95	93
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից	19,397	22,763
Պարտատոմսերի գծով	-	15
Այլ դեբիտորական պարտքեր	3,114	1,554
	22,606	**24,425**
	70,459	**35,951**

Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքերի մնացորդը ներառում է գործառնական վարձակալության գծով Հիմնադրամի վարձակալների պարտքը՝ 14,593 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ 7,488 հազար դրամ):

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված Հիմնադրամի ենթարկվածությունը պարտքային ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

11 Ժամկետային ավանդներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ներդրված ավանդներ	55,000	11,928
Ավանդի գծով հաշվեգրված տոկոսներ	278	794
	55,278	**12,722**

Ավանդները ներդրված են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ում: 2020թ. ընթացքում հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 1,090 հազար դրամ (2019թ.՝ 4,295 հազար դրամ):

Ժամկետային ավանդների հետ կապված Հիմնադրամի ենթարկվածությունը պարտքային, տոկոսադրույքի ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ բանկային հաշիվներ արժույթով	80,067	151,540
Ընթացիկ բանկային հաշիվներ արտարժույթով	96,240	66,856
Կանխիկը դրամարկղում	68	76
Դրամական միջոցներ և դրանց համարժեքների մնացորդը ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի մասին հաշվետվություններում	**176,375**	**218,471**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների հետ կապված Հիմնադրամի ենթարկվածությունը պարտքային, տոկոսադրույքի ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

13 Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Տարեսկզբի դրությամբ	**924,218**	**1,029,652**
Շնորհների ստացում	21,732	-
Տեղափոխում եկամտին վերաբերող շնորհներից	22,405	53,592
Շնորհների վերադարձ	(18,754)	-
Շնորհից եկամտի ճանաչում	(146,928)	(159,026)
Տարեվերջի դրությամբ	**802,673**	**924,218**

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից ստացված ֆինանսավորմամբ 2020թ. ընթացքում Հիմնադրամը շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումներ չի կատարել (2019թ.՝ 31,177 հազար դրամ), ձեռք է բերել համակարգչային տեխնիկա և սարքավորումներ՝ 11,110 հազար դրամ (2019թ.՝ 22,415 հազար դրամ) և այլ գույք 9,781 հազար դրամ (2019թ.՝ զրո դրամ):

14 Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Տարեսկզբի դրությամբ	**135,261**	-
Շնորհների ստացում	912,829	1,065,325
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներին	(22,405)	(53,592)
Շնորհների վերադարձ	(628)	-
Շնորհից եկամտի ճանաչում	(831,923)	(876,472)
Տարեվերջի դրությամբ	**193,134**	**135,261**

Տարվա ընթացքում ավելացումները ներկայացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեից ստացված դրամաշնորհները:

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ստացված կանխավճարներ	2	22,884
Փոխհատուցումներ աշխատակիցներին	35,328	28,656
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	27,361	28,810
Այլ	19,477	13,346
	82,168	**93,696**

2019թ. ստացված կանխավճարները ներկայացնում էին DESI միջազգային գիտական համագործակցության շրջանակներում ստացված գումարները:

«Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածի մնացորդը՝ ներկայացնում է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների կողմից չօգտագործված արձակուրդային օրերի գծով հաշվարկված պահուստի գումարը՝ 34,116 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 27,084 հազար դրամ), աշխատավարձի և առհաշիվ գումարների գծով պարտավորությունը՝ 1,212 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,572 հազար դրամ):

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

16 Զուտ ակտիվներ

(ա) Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է շենքերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատված շենքերի շահագործմանը զուգընթաց և դրանց օտարման ժամանակ վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված արդյունքին:

17 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմնադրամը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (Ծանոթագրություն 17(գ)),
- իրացվելիության ռիսկ (Ծանոթագրություն 17(դ)),
- շուկայական ռիսկ (Ծանոթագրություն 17(ե)):

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տարբեր ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կունենան հստակ սահմանված դերեր և պարտականություններ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դեբիտորական պարտքերի, ժամկետային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների գծով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Հիմնադրամի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի կամ շնորհատու կազմակերպության առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև Հիմնադրամի պատվիրատուների և շնորհատուների կառուցվածքը, ներառյալ նրանց երկրների կողմից հանձն առնված պարտավորությունների չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, մասնավորապես ներկայիս վատթարացող տնտեսական պայմաններում:

Հիմնադրամը առևտրային և այլ դեբիտորական պարտքերի մասով գրավ չի պահանջվում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը սահմանել է սպասվող պարտքային վնասի պահուստ:

Ստորև ներկայացված է պատքային ռիսկի և սպասվող պատքային վնասի վերաբերյալ տեղեկատվություն առևտրային դեբիտորների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2020թ. **հազ. դրամ**	**Միջին կշռված վնասի տոկոս**	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Արժեզրկման պահուստ**
Ոչ ժամկետանց	0%	47,853	-
Ժամկետանց ավել քան 365 օր	100%	1,063	(1,063)
		48,916	(1,063)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ուներ 176,307 հազար դրամ գումարով բանկային հաշիվներ (2019թ.՝ 218,395 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Թեև բանկային հաշիվների մնացորդների հավաքագումը կարող է կախված լինել տնտեսական գործոններից, ղեկավարությունը գտնում է, որ պայմանագրային կողմերը կկատարեն իրենց պարտականությունները: Բանկային հաշիվները պահվում են վստահություն վայելող երեք տեղական բանկերում:

Ժամկետային ավանդներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ուներ 55,278 հազար դրամ գումարով ժամկետային ավանդներ (2019թ.՝ 12,722 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Հիմնադրամը կարծում է, որ պարտքային ռիսկը էականորեն չի աճել սկզբնական ճանաչման օրվանից ի վեր: Թեև ժամկետային ավանդների մնացորդների հավաքագումը կարող է կախված

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետային ավանդները չափվում են ամորտիզացված ինքնարժեքով:

Հիմնադրամը համարում է, որ ժամկետային ավանդների պարտքային կորուստները էական չեն:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

(ե) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ասատիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Հիմնադրամը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով արտարժույթները, որոնցով արտահայտված են բանկային հաշիվների դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը, չեն համապատասխանում Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, Եվրոյով, Շվեյցարական ֆրանկով և ՌԴ ռուբլով:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի ենթարկվածությունն արտարժութային ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված 2020թ.	Եվրոյով արտահայտված 2020թ.	Այլ 2020թ.	ԱՄՆ դոլարով արտահայտված 2019թ.	Եվրոյով արտահայտված 2019թ.	Այլ 2019թ.
Դեբիտորական պարտքեր	13,652	-	4,887	-	-	-
Ընթացիկ բանկային հաշիվներ արտարժույթով	628	82,557	13,054	4,679	8,288	15,253
	14,280	**82,557**	**17,941**	**4,679**	**8,288**	**15,253**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

ՀՀ դրամ	Միջին փոխարժեք		Փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
1 ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ	522.59	480.24	489.20	479.70
1 Եվրո/ՀՀ դրամ	558.39	537.46	641.11	537.26

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ << դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

	Արժևորում	Արժեզրկում
հազ. դրամ	**Շահույթ կամ վնաս**	**Շահույթ կամ վնաս**
31 դեկտեմբերի 2020թ.		
ԱՄՆ դոլար (10% շարժ)	(1,428)	1,428
Եվրո (10% շարժ)	(8,256)	8,256
դեկտեմբերի 2019թ.		
ԱՄՆ դոլար (10% շարժ)	(468)	468
Եվրո (10% շարժ)	(829)	829

18 Կապիտալի կառավարում

Հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության բնույթը՝ այն չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Հիմնադրամի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջներ:

19 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրություն իր գույքի համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

2020թ. ընթացքում ղեկավարության կողմից Հիմնադրամի հաշվապահական գրանցումների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ բացակայող հիմնական միջոցները և պաշարները հաշվառվել են կոնկրետ աշխատակիցների անվամբ, ովքեր հաշվառման տվյալների համաձայն հանդիսացել են նյութական պատասխանատու: Աշխատակիցների ներկայացված զեկուցագրերից հետևում է, որ մինչև 2019թ. Հիմնադրամում իրականացված գույքագրման գործընթացը կրել է ձևական բնույթ, քանի որ բացակայող միջոցները մինչ օրս հաշվառված են Հիմնադրամի հաշվեկշռում որպես առկա գույք: Հիմնադրամում բացակայող հիմնական միջոցների և պաշարների հաշվեկշռային արժեքը կազմում է մոտ 100,000,000 << դրամ (դեռևս իրականացվում են գումարի ճշգրտման աշխատանքներ): Հիմնադրամի կողմից համապատասխան նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի այլ դատական վարույթներում, որոնք Ղեկավարության գնահատմամբ կարող են էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

20 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (տե՛ս ծանոթագրություն 1(ա)):

(բ) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ. դրամ	**2020թ.**	**2019թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**26,252**	**23,813**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.07.2021 19:01